## «ԲՆԱԿԱՆ ՄԱՐԴ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ՝ ԸՍՏ Դ. Հ. ԼՈՐԵՆՍԻ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Վ. Վ.

*Դ. Հ. Լորենսն անգլիական գրականության ամենանշանավոր գրողներից է՝ ընթերցողին հայտնի իր յուրօրինակ, հակասական գաղափարներով: Լորենսն ստեղծագործական կյանքի ընթացքում խրախուսել է իր ընթերցողներին վերադառնալ բնական արմատներին, զգալ բնությունից տրված ուժը, լինել ազատ և վայելել կյանքը, որն անընդունելի էր իր ժամանակակիցների համար, քանի որ փորձում էին այս կամ այն երևույթին գիտական բացատրություն տալ: Եթե բացատրությունը գիտական չլիներ և հիմնված լիներ պարզապես հույզերի, զգացմունքների, ներըմբռնման վրա, ապա չէր կարող արժանահավատ համարվել և չէր կարող ընդունելի լինել գիտակից մարդու համար, քանի որ դրանք մարդուն կարող էին տանել ինքնակործանման: Ժամանակակիցները կարծում էին, որ գիտությունը երբեք չի կարող կեղծ պատկերացումներ տալ շրջապատող երևույթների մասին:*

*«Ամերիկյան դասական գրականության ուսումնասիրություն» աշխատության մեջ Լորենսը դիմում է առասպելաբանությանը՝ փորձելով Ադամի և Եվայի աստվածաշնչյան պատմության միջոցով նկարագրել «բնական մարդու և գիտակից մարդու» տարբերությունը. «Սկզբում Ադամը ճանաչեց Եվային, ինչպես վայրի կենդանին է ճանաչում կողակցին իր բնազդների, ոչ թե բանականության շնորհիվ, որը հատուկ է բնական մարդուն: Հետո սկսվում է խնձորի պատմությունը: Գիտակցությունը դրդում է Ադամին զգալ, թե ինչ է ամոթը: Նա սկսում է գիտակցել, որ մարմինը նախ և առաջ անհրաժեշտ է սնունդ հայթայթելու համար: Այսինքն՝ մարմինը պետք է տքնաջան աշխատի, որպեսզի սնվի: Գիտակցությունը մարդու մեջ ինքնազոհաբերության զգացում է առաջացնում: Այնուհետև հին Ադամի մտածելակերպը չորս հազար տարվա ընթացքում հետզհետե սկսում է փոխվել»[1]: Ժամանակակից մարդու ինքնակործանումը Լորենսը նկարագրում է հետևյալ կերպ. «Քանի դեռ մարդն ընդունակ չէ ապրելու իրական զգացմունքներ, նա դատապարտված է ինքնակործանման: Մեր էությունը կարիք ունի զգալու այն բոլոր հաճելի զգացումները, որոնք բնությունը շնորհել է մարդուն»[2]: Այս հատվածը նկարագրում է մարդկությանը բնորոշ պայքարը բնազդի և բանականության միջև:*

---

[1] **Lawrence D. H.** *Phoenix. The Posthumous Papers of D. H. Lawrence (Edited by Edward D. McDonald), New York, 1968, p. 770.*

[2] **Lawrence D.H.***Studies in Classic American Literature (Edited by Ezra Greenspan, etc.), Cambridge, 2003, p. 2.*

*Ինչպես Ֆրոմն է պնդում, մարդիկ ձգտում են խուսափել զգացմունքներից, որպեսզի չզգան իրենց անհատականությունը[3]: Ըստ Լորենսի՝ սա ինքնասպանության գործընթաց է. «Բոլոր մարդիկ անում են այն, ինչ իրենց նախնիներն էին անում՝ նրանք սպանում են բնական մարդուն՝ հին Ադամի մարմնի զգացմունքները, կարիքները: Սա նման է ինքնասպանության»[4]:*

*«Կենսահարաբերություն, գրականություն և գրաքննություն»՝ «Քոմփաս» հրատարակության գրքի նախաբանում Հարրի Մուրը գրում է. «Ուշադիր կարդացողները շուտով հայտնաբերում են, որ Լորենսն իրականում իմաստուն մարդ է, որին ոչ թե կենսահարաբերությունն է հետաքրքրում, այլ կյանքն առհասարակ: Իսկ կյանքը բաղկացած է ոչ միայն կենսահարաբերությունից, այլ հաճելի զգացմունքներից և սիրուց՝ որպես մեխանիկական քաղաքակրթության հիմնական հակադրություն[5]:*

*Լորենսը շեշտում է մարմինը՝ միայն մարմնի և բանականության միջև հազարավոր տարիների ընթացքում առաջացած անհավասարակշռությունը շտկելու համար: Մուրը այս մասին ևս գրում է իր գրքի նախաբանում. «Լորենսը ժամանակակից աշխարհում փորձում է հավասարակշռություն պահպանել մտավոր և զգայական համակարգերի միջև, որին դասվում է ոչ միայն կենսահարաբերությունը, այլև մարդու մյուս բոլոր զգացմունքները: Նա շեշտում է բնական մարդուն հատուկ կիրքն ու զգացմունքները, որովհետև մարդկությունն այդքան ժամանակ արհամարհել է դրանք: Նա չի ցանկանում ոչնչացնել մտավոր գործընթացները, այլ փորձում է դրանք բնականոն կերպով հավասարակշռել զգացմունքների հետ»[6]:*

*Սա այն բանի ճշգրիտ նկարագրությունն էր, ինչ Լորենսը փորձում էր անել: Լին Շվարցը մի քանի պատճառ է նշում, թե ինչու Լորենսի մտքերը չէին ընդունվում գրական աշխարհում. «Լորենսը կրքոտ գրող է, իսկ մեր ճաշակն այլ է, մենք անսիրտ ենք: Քաղաքական և սոցիալական ցնցումների դարաշրջանում հեգնանքը, թերահավատությունը, հիասթափությունը դարձել են մարդկանց լավագույն ընկերները»[7]:*

*Ադելմանի գրքի նախաբանում Սանդրա Գիլբերտը ժամանակակիցների շրջանում Լորենսի մտքերի ճիշտ չընկալվելու առնչությամբ նույն պատճառներն է թվարկում. «Նա չափազանց լուրջ է, նրա մեջ բացակայում է հեգնանքը: Եվ նա տեղյակ է այդ մասին: Լորենսը շատ դժգոհ է, որ իր ժամանակակիցները կեղծում են զգացմունքները»[8]:*

---

[3] **Erich Fromm.** *The Art of Loving, New York, 1956, p. 11.*

[4] **Lawrence D. H.** *Phoenix, The Posthumous Papers of D. H. Lawrence, p. 771.*

[5] **Harry T.** *Moore, Sex, Literature and Censorship, New York, 1959, p. 8.*

[6] *Նույն տեղում, էջ 27:*

[7] **Adelman G.** *Reclaiming D. H. Lawrence: Contemporary Writers Speak Out, Lewisburg, 2002, p. 42.*

[8] *Նույն տեղում, էջ 3:*

*Լորենսը ցավով նշում է, որ ժամանակակից աշխարհի կործանման հիմնական պատճառներից է այն, որ մենք սովորել ենք զգացմունքներին չտրվել, քանի որ դրանք կարող են մեզ լրջորեն վնասել. «Մի՛ վստահիր ոչ մեկին, մի՛ տրվիր զգացմունքներին,- ահա սա է այսօրվա կարգախոսը: Վստահի՛ր մարդկանց՝ դատելով նրանց ըստ կարողության: Նյութապաշտությունը սպանում է բնական մարդու տեսակը, նրա զգացմունքները, կիրքը, սերը մյուսների նկատմամբ, քանի որ բնական մարդու հույզերը ժամանակակից մարդկանց համար ծիծաղելի են և ճղճիմ: Նրանք վստահում են միայն բանականությանը: Բնական մարդու և ժամանակակից աշխարհի միջև անդունդը շատ մեծ է: Իրական զգացմունքները հնարավոր է զգալ միայն մարմնի միջոցով: Մարմնական կյանքը զգացմունքային և հուզական կյանքն է: Մարմինը զգում է իրական քաղց, իրական ծարավ, ուրախություն, արևի ջերմություն, ցուրտ, իրական հաճույք, վարդերի բույր, իրական բարկություն, սեր, կիրք, ատելություն, ցավ: Բոլոր այս զգացողություններն անհնար է զգալ ուղեղի համակարգի միջոցով: Այդ զգացմունքները պատկանում են մարմնին և ճանաչվում միայն գիտակցության կողմից»*[9]*:*

*Սա, իսկապես, հետաքրքիր վարկած է, և Լորենսն այն պնդում է անընդմեջ՝ տարբեր ձևակերպումներ տալով նույն գաղափարին: Ըստ նրա՝ ամեն ինչ զգում ենք մեր մարմնով: Միտքը պարզապես գրանցում է փաստերը՝ մարմնի զգացողությունները: Սա թերևս անբնական թվա, սակայն այս հայտարարության մեջ ճշմարտություն կա, եթե մարդը սկսի լրջորեն խորհել այդ մասին: Զգացմունքները կասկածի տակ են դնում բանականությանը հակվածները: Սակայն նույնիսկ նրանք չեն կարող հստակ բացատրել, թե որտեղ են սկզբում առաջանում զգացմունքները՝ գլխուղեղո՞ւմ, թե՞ մարմնում: Արդյոք ուղե՞ղն է առաջինը զգում դրանք, ապա ազդանշանը փոխանցում մարմնին, թե՞ մարմինն է ավելի շուտ զգում, ապա ուղեղը գրանցում այդ փաստը: Ճնշվածությունը, ընկճախտը, անհանգստությունը մարմինն ավելի շուտ է զգում, քան ուղեղն ունակ է այն գրանցելու:*

*1929 թ. գրված «Այս նկարների նախաբանը» («Introduction to These Paintings») էսսեում Լորենսն առաջ է քաշում ուշագրավ մի վարկած արևմտյան ավանդույթում Վերածննդից սկսած մարմնի կարիքները ստորադասելու վերաբերյալ: Լորենսի կարծիքով, անգլիացիներն ու ամերիկացիները կաթվածահար են եղել վախից և այդ օրվանից ի վեր սկսել են ստորադասել մարմնի բնական ցանկությունները, պահանջմունքները*[10]*: Այս վախի զգացումն առաջացել է դեռևս Շեքսպիրի ժամանակաշրջանում՝ հասարակական հոռի երևույթների, մասնավորապես սիֆիլիսի տարածման պատճառով: Կենսահարաբերությունը*

---

[9] **Lawrence D. H.** *A Propos of Lady Chatterley's Lover, Phoenix II (Edited by Harry T. Moore, etc.), New York, 1971, pp. 82-111.*

[10] *Տե՛ս* **Lawrence D. H.** *Selected Literary Criticism (Edited by Anthony Beal), New York, 1986, p. 53:*

սարսափ էր ներշնչում մարդկանց[11]: Սիֆիլիսը նոր երևույթ էր Անգլիայում XV դարավերջին. «Անգլիայում անգամ թագավորական ընտանիքները տառապում էին սիֆիլիսից: Էդվարդ VI-ը և Էլիզաբեթը ծնվել էին՝ ժառանգելով այդ հիվանդությունն իրենց նախնիներից»[12]: Թյուդորներն ու Ստյուարդները մահացել են այդ հիվանդությունից: Այս ժամանակահատվածում Անգլիայի և Շոտլանդիայի առօրյայում արդեն ձևավորվել էր «pox on you» արտահայտությունը, որն անեծքի մի տեսակ էր՝ ներառելով «սիֆիլիս» բառը: Սա թերևս ցույց է տալիս, որ վախի զգացումը այդ հիվանդության նկատմամբ իրական էր և պղտորում էր այդ ժամանակաշրջանի մարդկանց հոգեկան աշխարհը՝ մեծապես ազդելով նրանց սեռական կյանքի վրա: Ազնվական խավը անգամ սկսում է սահմանափակել մարմնական զգացմունքները՝ հիվանդությունից խուսափելու համար: Իրական, բնական կենսահարաբերությունն անհնար էր ունենալ նման վախը սրտներում[13]:

Այսպիսով, այս վախը բույն է դնում մարդկանց գիտակցության մեջ, և կենսահարաբերությունը սկսում է նույնացվել վախի զգացման հետ: Լորենսի կարծիքով՝ այս վախը նաև ստիպում է մարդուն սահմանափակել իր շփումը մարդկանց հետ՝ հանգեցնելով այն բանի, որ մարդիկ սկսում են ավելի շատ վստահել գիտությանը՝ հեռանալով բնական արմատներից[14]: «Բնազդների միջոցով է հնարավոր, որ մարդիկ ճանաչեն իրար մարմնապես: Միայն բնազդաբար է հնարավոր զգալ դիմացինի հուզերն ու ապրումները: Երկու մարդկանց միջև հրապուրանքը բնազդաբար է ծագում և ոչ թե գիտակցաբար»[15]: Լորենսի կարծիքով՝ ժամանակակից մարդիկ, մասնավորապես՝ Անգլիայում և Ամերիկայում, իրականում չեն զգացել իրական, ճշմարիտ սեր, կիրք, քանի որ սպանել են իրենց մեջ բնազդներին հետևելու ցանկությունը[16]: Հասարակական խնդիրներով զբաղվող գիտնականներին Լորենսի գաղափարները կարող են չափազանցություն թվալ, սակայն նրանք հաստատում են, որ Լորենսի արտահայտած մտքերում ճշմարտություն կա:

Ինչպես Գարրի Վոթսոնն է հաստատում «Դ. Հ. Լորենս և խղճուկ մարմին» էսսեում, Լորենսն իր պնդումները վերցրել է Մաքս Վեբերի տեսությունից՝ ավելացնելով սեփական գաղափարներն իր էսսեում: Վեբերի «Բողոքական էթիկան և կապիտալիզմի հոգին» աշխատության մեջ Լորենսն իրեն հոգեհարազատ մտքեր է գտնում և գրում, որ բուրժուական գիտակցությունը վախ և ատելություն է սերմանում տղամարդկանց և

[11] Նույն տեղում, էջ 53:
[12] Նույն տեղում, էջ 54:
[13] Նույն տեղում, էջ 57:
[14] Նույն տեղում, էջ 58:
[15] Նույն տեղում:
[16] Նույն տեղում, էջ 59:

*կանանց հոգիներում բնազդային, ինտուիտիվ մարմնի նկատմամբ[17]: Քանի որ վախն ու ատելությունը պատճառաբանված էին, մարդիկ սկսում են ճնշել բնազդները: Անշուշտ, այս գաղափարները տարածողները հասարակության մեջ մեծ ազդեցություն ունեցող մարդիկ են:*

*Ինչպես Փալմերն ու Բալդիքն են նկատել, անգլիական գրականությունը, պատմությունը, բարքերն ու սովորույթները որպես առարկա առաջին անգամ Հնդկաստանի քոլեջներում են դասավանդվել՝ երեխաներին ավելի քաղաքակիրթ դարձնելու համար: Այն կիրառվում էր որպես գենդերի և դասակարգերի վերահսկողության գործիք[18]: Ըստ Լորենսի՝ ահա այս կեղծ բարոյագիտությունն է, որ մարդկանց դարձնում է ռոբոտ:*

*Այսպիսով, բնական մարդը, ըստ Լորենսի, ուժգին ցանկության, սիրո, կրքի հետևանքով առաջացած հարաբերությունների կողմնակիցն է, երբ մարդն ասես կորցնում է տեղի և ժամանակի զգացողությունը և ձուլվում տիեզերքին:*

## КОНЦЕПЦИЯ Д. Г. ЛОУРЕНСА О "ЕСТЕСТВЕННОМ ЧЕЛОВЕКЕ"

ОГАНЕСЯН В. В.

Резюме

Концепция Д. Г. Лоуренса о "естественном человеке" основана на идее о том, что человек отошел от своего природного естества и пренебрег тем, что, в первую очередь, он является чувственным существом, подверженным страстям, наделенным интуицией и свободным в биокоммуникациях. Д. Лоуренс сравнивает современного человека с роботом, ограничивающим свои чувства в силу нежелательного вмешательства сознания.

## THE CONCEPT OF D. H. LAWRENCE ON "THE NATURAL MAN”

V. HOVHANNISYAN

Abstract

The concept of D. H. Lawrence on the "natural man" is based on the idea that a person has departed from his nature and ignored the fact that first of all he is a sensual creature, prone to the passions, endowed with intuition and free in biocommunication. D. H. Lawrence compares modern man with a robot, limiting his feelings due to unwanted interference of consciousness.

---

[17] *Տե՛ս D. H. Lawrence on Hardy and Painting, Study of Thomas Hardy and Introduction to these Paintings,Cambridge,1985, p. 61:*

[18] *Տե՛ս* **Stephen Slemon.** *Teaching and End of Empire, College Literature, UK, 1992-1993, p. 153:*